# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան
համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ. Շահումյան 1փ. 66, Հեռ. (0322) 3
84 62, 3 78 97 , shahumyan.lori@mta.gov.am

N Ե-236/18
*01 հոկտեմբեր 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**
**ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ**

Կից ներկայացնում եմ Շահումյան համայնքի ղեկավարի թիվ 64-Ա, 65-Ա, 66-Ա, 67-Ա, 68-Ա, 69-Ա, 70-Ա, 71-Ա որոշումները:

Առդիր 10 թերթ:

10/1/2018

X

**Համայնքի ղեկավար՝ Էդիկ Մանուկյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 64-Ա

## 06-084-0100-0006 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղաքացի Ռուստամ Օհանյանի լիազորված անձ Լևիկ Քոչարյանի դիմումը, 04.03.1993թ-ին կազմված տեխնիկական անձնագիրը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 05.04.1991թ. թիվ 7 որոշումը, Արտյոմ Սաքանյան ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-084-0100-0006 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.13365 հա բնակելի տան կառուցապատման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1963թ-ի կառուցված 90.23 քմ. մակերեսով բնակելի տան նկատմամբ Ռուստամ Լյուդվիկի Օհանյանի /ծնված 1945թ./ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված հողամաս անհատույց սեփականության իրավունքով վերհատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Ռուստամ Լյուդվիկի Օհանյանի /ծնված 1945թ./ սեփականության իրավունքը:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Շահումյան համայնք 2 փող. 61 բնակելի տուն:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. օգոստոսի 14
գ.Շահումյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 65-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ

Շահումյան համայնքի սեփականություն համարվող կադաստրային քարտեզի 06-084-0022-0039 ծածկագրի տակ գտնվող 0.04025 հա բնակավայրի հողամասին տրամադրել Շահումյան համայնք 12 փող. 13 հող փոստային հասցե:

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. օգոստոսի 22
գ.Շահումյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 66-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

Շահումյան համայնքում գտնվող Ելիշկա Արմենակի Ապկարյանին սեփականության իրավունքով պատկանող 06-084-0112-0008 ծածկագրի տակ գտնվող 0.1688 հա բնակավայրի հողամասին և նրա վրա կառուցված բնակելի տանը տրամադրել Շահումյան համայնք 12 փող. 1 փկղ. 2 տուն փոստային հասցե:

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. օգոստոսի 22
գ.Շահումյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 67-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Շահումյան համայնքում գտնվող Սիրուն Օնիկի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող 06-084-0100-0024 ծածկագրի տակ գտնվող 0.136 հա բնակավայրի հողամասին և նրա վրա կառուցված բնակելի տանը տրամադրել Շահումյան համայնք 5 փող. 13 տուն փոստային հասցե:

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. օգոստոսի 22
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 68-Ա

## ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Շահումյան համայնքի ավագանու 13.04.2017թ-ի ,,ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին,, թիվ 15-Ա որոշմամբ, հաշվի առնելով բնակիչների դիմումները, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռախսա Մինասյանի զեկուցագիրը, համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձնաժողովի,, եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ

Շահումյան համայնքի 2018թ-ի բյուջեի բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 472900-ով նախատեսված գումարից թվով 4 /չորս/ սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն ընդամենը 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2018թ. սեպտեմբերի 03
գ.Շահումյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի
2018 թվականի սեպտեմբերի 03-ի N 68-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Կռոյան Սվետլանա — 40000 /քառասուն հազար/ դրամ, սոցիալական օգնություն
2. Ղուլյան Հայկուշ — 20000 /քսան հազար/ դրամ, սոցիալական օգնություն
3. Չերնիշովա Ալվարդ — 10000 /տաս հազար/ դրամ, սոցիալական օգնություն
4. Սիմոնյան Տաթևիկ — 10000 /տաս հազար/ դրամ, սոցիալական օգնություն

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 69-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ Քաղաքաշինության մասին օրենքով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010թ. Թիվ 186-Ն հրամանով, հիմք ընդունելով Շահումյան համայնքի ավագանու 31.08.2018թ-ի թիվ 24-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված սուբյեկտների անճշտությունների ուղղման համար Շահումյան համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-084-0022-0043 ծածկագրերի տակ գտնվող 0.00991 հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն ՀՀ կառավարության 13/04/2006թ. թիվ 713-Ն որոշմամբ սխալմամբ փոխանցված չէ համայնքին, ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 186-Ն հրամանի II գլխի կետերով և հաշվի առնելով Շահումյան համայնքի ավագանու 31.08.2018թ-ի թիվ 24-Ա որոշումը՝ նշված հողամասի նկատմամբ ճանաչել Շահումյան համայնքի սեփականության իրավունքը:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Անշարժ գույքին տրամադրել Շահումյան համայնք 12 փող. 15/1 փոստային հասցե:
5. .Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. սեպտեմբերի 03
գ.Շահումյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 70-Ա

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքով, Քաղաքացիական օրենսգրքով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 02.02.2002թ-ի թիվ 88 որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 1930308 վկայականը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ

1. Շահումյան համայնքի 1-ին փող. 59շ. թիվ 45 փոստային հասցեում գտնվող, համայնքին սեփականության իրավունքով պատկանող 190.31 քմ մակերեսով բնակելի նպատակային նշանակության տարածքի նպատակային և գործառնական նշանակությունը գործող օրենսդրությանը համապատասխան փոխել որպես հասարակական նպատակային նշանակության շինության, գործառնական նշանակությունը՝ /օգտագործման նպատակը/ մանկապարտեզ:

2. Շինության գործառնական նշանակությունը փոփոխված է առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, քանի որ շինարարական աշխատանքներ չեն կատարվել, ըստ որի շինարարության թույլտվություն տրամադրելու անհրաժեշտություն չկա /ՀՀ կառավարության 19.03.2015թ-ի թիվ 596-Ն որոշում/:

3. Գործառնական նշանակությունը փոփոխված անշարժ գույքին՝ մանկապարտեզին տրամադրել նոր փոստային հասցե՝ Շահումյան համայնք 1 փող. 59 շ. 45 մանկապարտեզ:

4. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2018թ. սեպտեմբերի 03
գ.Շահումյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 71-Ա

### ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Շահումյան համայնքի ավագանու 13.04.2017թ-ի ,,ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին,, թիվ 15-Ա որոշմամբ, հաշվի առնելով բնակիչների դիմումները, համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձնաժողովի,, եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ

Շահումյան համայնքի 2018թ-ի բյուջեի բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 472900-ով նախատեսված գումարից թվով 3/երեք/ սոցիալապես անապահով ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն ընդամենը 55000 /հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

**Համայնքի ղեկավար** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2018թ. սեպտեմբերի 10
գ.Շահումյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի
2018 թվականի սեպտեմբերի 10-ի N 71-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Նալբանդյան Գուրգեն 25000 /քսանհինգ հազար/ դրամ, սոցիալական օգնություն
2. Մանվելյան Քարմենուհի 15000 /տասնհինգ հազար/ դրամ, սոցիալական օգնություն
3. Մաթևոսյան Սվետլանա 15000 /տասնհինգ հազար/ դրամ, սոցիալական օգնություն

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ